ՔԱՂՎԱԾՔ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի
2024 թվականի հունիսի 24-ի՝ հարցման կարգով նիստի
N 12 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Արգամ Համլետի Արտաշյանի «Թվային կառավարում: Առաջադեմ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունները» ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու** մասին հարցը:

Հրատարակության ներկայացված ուսումնական ձեռնարկն արդիական է, ունի կարևոր գործնական նշանակություն և նախատեսված է ՀՊՏՀ կրթական ծրագրերում ներառված «Տեղեկատվական տեխնոլոգիաների ներածություն», «Կառավարման տեղեկատվական համակարգեր», «Կրթական և տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ» և մի քանի այլ դասընթացների շրջանակներում դասերի անցկացման համար: Ձեռնարկում ներկայացված նյութը վերաբերում է վերոնշյալ դասընթացների ոչ թե ամբողջական ծրագրերին, այլ դրանց որոշ թեմաներին՝ կենտրոնանալով այնպիսի ուղղությունների վրա, ինչպիսիք են արհեստական բանականությունը, թվայնացումը, վիրտուալ իրականությունը, բլոկչեյնը, ժամանակակից տեղեկատվական անվտանգային խնդիրները և այլն, որոնք արտացոլում են ՏՏ ժամանակակից զարգացումները և օգնում են հասկանալ, թե ինչպես կարող են դրանք կիրառվել կառավարման մեջ:

Ուսումնական ձեռնարկն ուղարկվել է 2 արտաքին անանուն («կույր») գրախոսության և 2 գրախոս փորձագետների կողմից ստացվել են դրական եզրակացություններ:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել են նաև մեկ արտաքին և մեկ ներքին գրախոսների դրական կարծիքներ.

1. Վարազդատ Կորյունի Ավետիսյան՝ Գավառի պետական համալսարանի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու:
2. Անուշ Լավրենտի Թումանյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու:

Հրատարակության ներկայացված ուսումնական ձեռնարկը գրված է շատ պարզ ու ընկալելի ոճով: Բացահայտելով բիզնեսի ոլորտում ՏՏ-ի կողմից ներկայացված հնարավորություններն ու մարտահրավերները՝ այն կարող է ծառայել որպես օգտակար ուղեցույց մասնագետների, գիտնականների և ոլորտով հետաքրքրվողների համար, ովքեր ձգտում են խորացնել իրենց

գիտելիքները և զարգացնել ժամանակակից կառավարման և առաջնորդման ոլորտում SS հմտությունները, հասկանալ SS-ի և ժամանակակից բիզնեսի կառավարման բարդ փոխազդեցությունը: Ձեռնարկն ընթերցողներին հնարավորություն կտա օգտագործել տեխնոլոգիայի փոխակերպող ներուժը՝ միաժամանակ վստահությամբ և հեռատեսությամբ ներկայացնելով թվային դարաշրջանի բարդությունները:

Ուսումնական ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի 2024 թվականի մարտի 18-ի նիստում (արձանագրություն N 8) և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 3-ի, ժամը 13:30-ի նիստում (արձանագրություն N 32):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով 2 արտաքին անանուն («կույր») գրախոս փորձագետների դրական եզրակացությունները, մեկ արտաքին և մեկ ներքին գրախոսների դրական կարծիքները, տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Արգամ Համլետի Արտաշյանի «Թվային կառավարում: Առաջադեմ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունները» ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության՝ 100 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում** (նախատեսված է հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով):

Սահմանված ժամկետում (ժամը 9:00-ից մինչև 17:30-ն ընկած ժամանակահատվածում) հարցման կարգով նիստի օրակարգային հարցի քննարկմանն ու քվեարկությանը գիտական խորհրդի 60 անդամից մասնակցեցին 54-ը: Քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Վ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Կ. Նազարինյան**

2024 թ. հունիսի 24
Երևան